



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 4-ի N 12 արձանագրությունը (որոշումը)՝ կարգադրում եմ.

1. Հայկանուշ Վարդգեսի Պետրոսյանին 2019 թվականի հոկտեմբերի 14-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի օգոստոսի 7-ի «Հ. Պետրոսյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին» N 138-Ա կարգադրության 2-րդ կետը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի հոկտեմբերի 14
ք. Հրազդան
N 193-Ա

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

